Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. ՀՈՒՆԻՍԻ 12-13-Ը ՂԱԶԱԽՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք.ԱՍՏԱՆԱ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. <u>Անունը, ազգանունը՝</u>

Արմեն Սիմոնյան

2. <u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ. Հունիսի 12-13-ը Ղազախստանի Հանրապետություն (Ք. Աստանա)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

Ղազախստանի տրանսպորտի նախարար Մարատ Կարաբաև և Եվրոպական Հանձնաժողովի միջազգային համագործակցության գլխավոր տնօրինության խորհրդատու Հենրի Հոլոլե:

5. <u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>

Մասնակցել եմ 2024թ. հունիսի 12-ին կայացած Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքի (Trans-Caspian Transport Corridor) զարգացման խթանման հարցերով համակարգման պլատֆորմի մեկնարկին նվիրված միջոցառմանը:

6. <u>Քննարկված թեմաները.</u>

Օրակարգում ներառված են եղել Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքի գործարկման ուղղությամբ մասնակից երկրների համապատասխան ներդրումային ծրագրերը, դրանց առաջնահերթությունների վերաբերյալ վերջին զարգացումները, ինչպես նաև օրակարգում ներառված այլ հարցեր:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>

Հանդիպման ընթացքում հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալ պլատֆորմին, դրա հիմնական նպատակներին ու խնդիրներին, հիմնական դերին՝

որպես Տրանսկասպյան տրանսպորտային միջանցքի խթանման և Կենտրոնական Ասիայի կոշտ և փափուկ ենթակառուցվածքներում առաջնահերթ ծրագրերի իրականացման միջոցի, ինչպես նաև ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ԵՄ-ի և Կենտրոնականի Ասիայի միջև կայուն տրանսպորտային միջանցքների ուսումնասիրությանը:

Հանդիպման ընթացքում հանդես եմ եկել ելույթով՝ ՀՀ կառավարության կողմից նախաձեռնած «Խաղաղության խաչմերուկ» ծրագրի վերաբերյալ :

8. <u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.</u>

Ստորագրված փաստաթղթեր առկա չեն:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u>

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

18.06.2024